# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
## «ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Սևան «27» հուլիսի 2021թ.
ժամը 10 $^{00}$

Մասնակցում են՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Ղազարյան Աղաբեկ

**Հանձնաժողովի անդամներ՝**

Մնացականյան Կարեն
Գևորգյան Արմեն
Կարապետյան Եղիսաբեթ

**Հանձնաժողովի քարտուղար՝** Գուլանյան Քրիստինե

1. **Տեղեկատվություն «ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների վարման մասին**

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից «ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցություններին ընթացակարգի միակ մասնակից «Ֆլեշ» ՍՊԸ-ն չի ներկայացել և այլ գնային առաջարկ չի ներկայացրել:

2. **Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝**

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները և ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետը «ՍԱՊ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով ընթացակարգին ընտրված մասնակից հայտարարել «Ֆլեշ» ՍՊԸ-ին՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ կմտնեն գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

2.2 Պայմանագրի կնքման նպատակով «Ֆլեշ» ՍՊԸ-ին ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի կամ կանխիկ փողի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի 10 տոկոսի չափով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ և որակավորման ապահովում տուժանքի կամ կանխիկ փողի ձևով միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի 15 տոկոսի չափով որը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ

2.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման տեքստը:

2.4 «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

**3.Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:**

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Ղազարյան

Անդամներ՝ _____ Կ. Մնացականյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ե. Կարապետյան

Քարտուղար՝ _____ Ք. Գուլանյան